

զի այդ թուականին յօրինած «Զօրք անմարմնոց», ոտանաւորին մէջ իր մասին կը գրէ ի միջի այլոց.

«Ի իւսմամբ միտք իմ ի քեզ պարէ
Մոլորական եմ ի տանէ
Զաքարիայէ սա գրեալ է
Ի թափառնիկ ոմն աղքատէ:»

Յամի 1544 կը գտնուէր Կ.Պոլիս ի Սուլիմանաստիր, երբ պատրիարքութեան աթոռն կը նստէր Աստուածատուր վարդապետ (1537—1550): Թէ յառաջագոյն արդէն ծանօթ էր Աստուածատրոյ, չենք գիտեր¹. բայց հոս կը բարեկամանայ սիրոյ սերտ կապերով. եւ անոր խնդրանք կ'օրինակէ Ստոյն Կալիսթենեայ Աղեքսանդրի վարուց օրինակ մը՝ ընտիր գրչութեամբ, որ այժմ կը պահուի ի Մանչեստր John Rylands գրաւաճառի քով: Ասոր վրայ կը խօսինք վարը մանրամասնութեամբ: Մատենին վերջն գրած է Յիշատակարան մը եւ ոտանաւոր ընծայական մը. վերջինս յետոյ հրատարակելու մտքով, կը բերենք հոս յիշատակարանն ամբողջութեամբ²:

¹ Աստուածատուր, որ աշակերտն էր Դերջանցի Մաղաքիա վարդապետին (Ընդ. Օր. 1903, էջ 83, մահուան տարին կը դրուի 1555, կարգաւ 1550), թերեւս հարազատ եղբայրն իսկ ըլլայ Զաքարիայի, եթէ յետագայ Յիշատակարանին «եղբայր» պարզապէս մտերմութեան յայտարար չէ: — 1523էն ծանօթ է Աստուածատուր Մեծոփեցի մը, որուն խնդրանք գրած է Գր. Աղթամարցի «Ծաղկունք ասեն, հերիք արադ տաղն (Կոստանեանց՝ Գր. Աղթ. 48—53):

² Տալիան՝ անդ 157 հրատարակած է արդէն Ս. Ա. Պարոնեանի ընդօրինակութեան համաձայն, ուր սակայն